

ARMENIAN HOLY TRINITY CHURCH OF GREATER BOSTON



ANNUAL REPORT

1958

Սիրելի Ծխականներ,

Ողորմութեամբն Ամենակալին Աստուծոյ եւ անվերապահ աջակցութեամբ մեր սիրեցեալ բանաւոր հօտին եւ եկեղեցապատկան բոլոր մարմիններու յաջող ու բեղմանաւոր տարի մը եւս բոլորեցինք։ Մեր ծուխը տարու է տարի կ'աճի, նորածիններու թիւը կը բազմանայ, եւ եկեղեցւոյ շուրջը հաւաքուած երիտասարդներու եւ երիտասարդու հինգնին ապացոյց են անոր կենսուակութեանս ծուն մը աշխուժ ու կենսուանակ է մանուկներով ու պատանիներով։ Վասն զի անունց աշխանց կ'եռայ եւ անդադար շարժում կը յառաջացնեն։ Նարդումը կեանքն իսկ է՝ նույնք իրենց երջանկութիւնը կը գտնեն այդ վառվըռուն կեանքին մէջ ու կը մինչաբուին, մոռնալով իրենց յոգնութիւնը եւ այլ բազմապի զոհողութիւնները։ Այլ ապէէս լճացած եւ անշաքժացած ամայութիւն մը կը տիրէ տան մէջ։ Երբ տան մը պատկերը այս է, հապա ի նչ պէտք է ըլլայ եկեղեցիի մը պատկերը՝ որ համայնքին հոգեւոր տուշնն է։ Սենք ալ, մեր կարգին, որպէս հոգեւոր հայրը այս համայնքին, կը հրճուինք տեսնելով մեր եկեղեցւոյ յարաշարժ եւ արդիւնաւ էտ հոգեւոր կեանքը Սեր հոգեկան հրճուանքն ու մինիթացութիւնը յայտնել է յետոյ հետագայ տուշեաւով կ'ուզենք տեղեակ պահել մեր ծխականները այս բեղմանաւոր արդիւնքին մէջ մեր ունեցած համեստ բաժինը որպէս հոգեւոր պաշտօնեան Պոստոնի Ս. նդրորդութիւն Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ։

Ա.- ԿՐՕՆԱԿԱՆ - 1958 տարեշրջանին կանոնաւոր կերպով կատարեցինք մեր կրօնական պարտականութիւնը պաշտամունքներով։ Ամէն կիրակի պատարագեցինք ու քարոզեցինք Պատարագեցինք նաեւ Վարդանանց տօնին պանծացնելով յիշատակը հինգերորդ դարու հաւատքի հերոսներուն՝ որոնք հետագայ բոլոր սերունդներուն օրինակ հանգիւացան իրենց հաւատքով ու զոհաբերութեամբ։ Պաշտամունքներու առանցքը կը կազմեն հրեշտակային երջակցութիւնն ու Բանին կենաց քարոզութիւնը և նույն մասը կանոնաւոր կերպով կատարեցին մեր սարկաւագաց եւ դպրաց դասերը, դեկապարութեամբ մեր կարող դպրապետ Պ. Տիրան Տինձեանի, օժանդակելով մեր մատուցած սուրբը եւ անմահ պատարագին։ Խոկերկրորդ մասը շանացած ենք կատարել մեր կարողութեան չափով ի մինիթարութիւն հոգեծարաւը բարեկաշտ ժողովուրդին՝ դաստիարակելով եւ ուսուցանելով ի Սուրբ Գրոց, իբենց առջեւ պատկերացնելով կեանքին անդրագոյն նպատակը։ Ֆանացած ենք միշտ վառ պահեն։ մեր ժողովուրդին ազգային զգացումները եւ մեր Սրբութիւն Սրբոց Ս. էջմիածնի սէրը, միշտ յարգանք պարտադրելով անոր իմաստուն Գահակալին եւ Հայաստանեայց եկեղեցւոյ միակ Գլուխին ու Պետին։

Բ.- ԽՈՌՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՔ - 1958 տարեշրջանին կատարած ենք 51 մկրտութիւն, 22 պսակ եւ 62 թաղում։

Այս խորհրդակատարութեանց արձանագրութիւնները կանոնաւոր կերպով անցուցած ենք տոմարին մէջ։ Խորաքանչիւր մկրտութեան եւ պսակին լեցուցած եւ ղրկած ենք համապատասխան Վկայագիր։ Հոգաբարձութեան անունով ղրկուած են նաեւ ամուսնութեանց առթիւ, շնորհական եւ մահերու պարագային։ ցաւակցական քարտեր։ Պատկեր լուսակներէն յետոյ երբեմն ներկայ եղած ենք ընդունելութեանց, երբ մեր ժամանակը ներած է, իսկ մահուան պարագային։ առանց բացառութեան այցելած ենք մեռելատուն եւ թաղումէն յետոյ՝ ընտանիքին։ Խոկերկրութիւն օրուան շրջանին դարձեալ ընտանիքին ցաւակցական այցելութիւն տուած ենք։

Գ.- ԽՈՌՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՔ ԶՈՅՐ ԵԿԵՂԵՆԻՆԵՐՈՒ ՍԷՀ - Խաչվերացի տօնին առթիւ, Սեպտեմբեր 14-ին, պատարագեցինք եւ քարոզեցինք հոծ բազմութեան մը ներկայութեան լորէնսի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ տեղւոյն Հովհիւն ու Ծխական Խորհուրդին խնդրանքին վրայ ի հոգեւոր մինիթարութիւն շրջանի բարեցւառակայ ժողովուրդին։ Խոյն օրը տեղւոյն Հովհիւր Արժ. Տ. Վարդան Քինյա Աւագեան պատարագեց եւ քարոզեց մեր եկեղեցւոյ մէջ։

Սկստութեան, պսակի եւ թաղման արարողութիւն կատարած ենք մէկէ աւելի անգամներ Ուսութիւնական Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ։ Նմանապէս պսակ եւ թաղում կադարած ենք Փրաւ հտէնսի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մէջ։ Պսակի օրհնութիւն կադարած ենք Հէյվը Հիւի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Նաեւ Թաղման արարողութիւն՝ Ուստորի Ս. Փրկիչ եւ Լորէնսի Ս. Խաչ եկեղեցիներու մէջ։ Խոկ մեր ծուխին մէջ, եկեղեցին դուրս, լին եւ Սէյլըմ։

Դ.՝ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԾՈՒԽԵՐՈՒ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՅ.՝ ԵԿԵՂԵԳԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ յա-
ջողութիւններէն մին հոգուական այցելութեան մէջ կը կայանայ։ Այս այցելու-
թիւնները իրենց բարերար արդիւնքը կ'ունենան անպայման։ Բարեպաշտ հայ մար-
դը կամ կիսը երբ իր տան մէջ այցելութիւնը կ'ընդունի իր հովիւին հոգեկան
բաւարարութիւն եւ գոհացում կը ստանայ։ Իր միտքը զբաղեցնող հարցերուն երբ
շեշտակի բացատրութիւն կը ստանայ իր հովիւին հոգեպէս կը խաղաղի։ Այցելած
ենք այնքան ծուխեր՝ որքան մեր ժամանակը ներած է։ Ստադրած ենք 1959 տարե-
շրջանին այցելել այն ծխականներուն։ Որոնց տակաւին այցելու պատեհութիւն
չենք ունեցած մեր այլազան զբաղումներու պատճառաւ։

Այս այցելութիւններու երկրորդ մասը կը կայանայ հիւանդներու
մխիթարութիւն ջամբելու եւ Ս. Հաղորդութիւն մատակարարելու մէջ։ Սիջին հա-
շիւով այցելած ենք շաբաթական հինգ հիւանդի։ Բայց ցաւ ի սիրտ կ'արտայայ-
տուինք հոսոր մեր ծխականներէն ոմանք հիւանդանոց պառկած են եւ մենք լուր
չենք ունեցած, վասն զի ոչ ընտանեկան պարագաները եւ ոչ ալ ազգականները
մեզ տեղեակ չեն պահած։ Ինչպէս բժիշկը կը կանչուի, նոյն ձեւով ալ հովիւը
տեղեակ պէտք է պահուի այցելութեան համար։ Հիւանդին բժշկութեան համար Հո-
վիւը իր աղօթքը պէտք է միացնէ բժիշկի գեղին։ Ասոր առնչութեամբ ըսենք
նաեւ որ երբեմն ալ շատ ուշ լուր կը տրուի մեզի, երբ արդէն հիւանդը կոր-
սընցուցած է իր գիտակցութիւնը։ Հիւանդը պէտք է հաղորդուի գիտակից եղած
միջոցին։ Խոկ գործողութեան ենթարկուողներ պէտք է հաղորդուին գործողութե-
նէ առաջ։ Հիւանդներ Ս. Հաղորդութենէ երբեք պէտք չէ վախնան։ Ս. Հաղորդու-
թիւնը զիրենք գերեզման չառաջնորդեր, այլ դէպ ի կեանք։

Երբեմն ալ հիւանդին տէրը չ'ուզեր որ հովիւը լուր ունենայ եւ
այցելէ, պարզապէս հիւանդութիւնը գաղտնի պահելու մտօք։ Այնպիսիներ պէտք է
զիտակցին թէ Հովիւը խոստովանահայը է եւ կրնայ գաղտնիք պահել եւ թէ հի-
ւանդութիւնը ամօթ բան մը չէ։ Սարդ մարմնին ցաւը բժիշկէն եւ հոգիին ցաւը
քահանայէն պէտք չէ պահէ։ Երկութիւն պարտականութիւններն ալ յար եւ նման է,
այսինքն ցաւին դէմ դարման որոնել եւ քաշալ երել տառապողը իր ցաւին մէջ։

Ե.՝ ԴԻՒԱՆԱԿԱՆ.՝ Դիւանական աշխատանքները կը գրաւեն մեր ժամա-
նակին որոշ մէկ մասը։ Բոլոր ստացուած նամակներ ժողովներու ենթարկուելի
յետոյ կը դասաւորուին յատուկ թղթածրաններու մէջ։ Բոլոր նամակներուն կը
պատասխաններ առանց բացառութեան։ Ընթացիկ տարուան մէջ գրած ենք 143 նա-
մակներ։ Որոնց կրկնակ օրինակները նմանապէս կը պահուին յատուկ թղթածրա-
ռներու մէջ։ Գրասենեակի մեր աշխատանքներուն իր կարեւոր բաժինը կը բերէ
մեր ժրաշջան քարտուղարը։ Պ. Գարեգին Պօղոսեան, որ ինքն ալ իր կարգին օրն
ի բուն գրաղած կը մնայ եկեղեցւոյ գործերուն ճիւղաւորուած եւ բազմացած
ըլլալուն պատճառաւ։

Օրը կ'ընդունինք միջին հաիւով հեռածայնի 20 կանչ, որոնք պէտք
է պատասխանուին մեր կամ քարտուղարին կողմէ գոհացում տալու համար իւրա-
քանչիւրի խնդրանքին կամ հարցումին։ Խոկ գրասենեակի կողմէ կը կանչուին
ժողովականները յիշեցնելու համար ժողովի օրն ու բնոյթը եւ բոլոր անոնք
որոնց հետ գործ կ'ունենանք։

Խոկ Շինութեան Յանձնախումբի հաշիւները յատուկ տոմարներու մէջ
կ'արձանագրուին Ծխական Խորհուրդի անդամներէն։ Արթը Անսպիկ եանի կողմէ
որ մասնագէտ հաշուակալ է։ Դրամները կու գան մեզի, զանոնք կը դասաւորենք
եւ ցանկը կը պատրաստենք մեր ձեռքով ու կը փոխանցենք Փոխ-Գանձապահին փո-
խան ստորագրութեան եւ այդ ցանկը կը փոխանցենք Պ. Հաշուակալին։ Անիկա
զանոնք տոմարներուն մէջ արձանագրելէ յետոյ կը պատրաստէ ստացագիրները։
Պ. Գանձապահը փոխ-գանձապահին ստորագրած ցանկին վրայէն կը բաղդատէ իւրա-

քանչիւր ստացագիրը եւ այնուհետեւ կը ստորագրէ ստացագիրները վստահ ըլլա-
լով թէ արդէն ստորագրած գումարը դրամատուն դրուած է:

Զ.- ՎԱՐՉԱԿԱՆՔ.- Վարչական գործերը եւս մեծապէս կը զբաղեցնեն
մեզ: Ի պաշտօնէ մասնակցած ենք Ծխական նորհուրդի, Շինութեան թանձնախում-
բի, Տիկնանց Միութեան բոլոր ժողովներուն, ինչպէս նաև միւս եկեղեցապատ-
կան ժողովներու երբ հարկ տեսնուած է: Այսպէս ներկայ եղած ենք եօթանասուն
ժողովներու եւ այդ ժողովներու որոշումներէն մեզի ինկած բաժինը գործադրած
ենք: Ասկէ զատ մասնակցած ենք բարեսիրական նպատակներու համար կազմուած
յանձնախումբերուժողովներուն, որպիսին են՝ Պաղեստինի Գաղթականաց Օգնու-
թեան թանձնախումբ, որուն Ատենապետը եղած ենք, Թէքէեան Վարժարանի Շինու-
թեան թանձնախումբ, որուն նախագահը ըլլալու պատիւը ունինք, եւ այլ մշա-
կութային ժողովներուն:

Ներկայ եղած ենք հետեւեալ կազմակերպութեանց կամ հաստատութեանց
ճաշկերոյթներուն կամ ժողովներուն աստ կամ այլուր եւ կենդանի խօսքով ար-
տայայտուած ենք, ատենախօսութեան կամ դասախոսութեան ձեւի տակ:- Վարդանանց
տօնակատարութեան, Խրիմեան Հայրիկի տօնակատարութեան, Վեհափառ Հայրապետի
Թորելեանի ճաշկերոյթին, Լինի եւ Զըլսիի Տիկնանց Միութեանց ճաշկերոյթներ-
ուն, Պոստոնի Առաջին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ բացումին եւ ճաշկերոյթին,
Խարբերդի քաղաքի չորս միութեանց Եկեղեցւութեան միութեանց Յաշնդակի ժողով-
ներուն, Արլինկթոնի, Տորչէսթին եւ Զէմպրինի դպրոցասէրներու ճաշկերոյթնե-
րուն, Թէքէեանի ճաշկերոյթին ի Պոստոն եւ ի Լորէնս, Քէյմպրինի Եպիսկոպո-
սական Եկեղեցւոյ ճաշաժողովին, Ուստրի Ճեռնարկին, եւն. եւն.

Է.- ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ.- Թեմական Խորհուրդի մեր անդամակցութիւնը
կը շարունակուի որպէս փոխ-ատենապետ եւ կանոնաւոր կերպով նիւ ենրք կ'եր-
թանք նիստերուն ներկայ ըլլալու եւ մեր համեստ կարողութեան սահմանին մէջ
օգտակար հանդիսանալու: Թեմական Խորհուրդի մեր Վրայ դրած պարտականութիւն-
ները ջանացած ենք յաջողութեամբ պսակել: Հանից Փրաւիտէնս գացած եւ գիշեր-
ները մինչեւ ուշ ատեն անդ զբաղած ենք գաղութը յուզող խորհուրդով: Այս
նախնական աշխատանքներու յաջող ելքէն յետոյ երկից նախագահած ենք իրենց
ընդհանուր անդամական ժողովներուն՝ որպէս զի համերաշխութիւն եւ իրարհաս-
կացողութիւն գոյանայ գաղութին մէջ, ինչ որ այսօր կը վայելեն բոլորը ու-
րախութիւն պատճառելով Առաջնորդ Սրբազան Հօր, Թեմական Խորհուրդին եւ մե-
զի: Յանուն Թեմական Խորհուրդի շրջակայ Եկեղեցիներու Ծխական Խորհուրդնե-
րու հետ շփման գալով ջանացած ենք Առաջնորդաբանի հանդէպ իրենց ունեցած
նիւթական պարտականութիւնը կատարել տալ: Թեմիս ընդհանուր համայնքին մէջ
համերաշխութիւն ու միասնականութիւն յառաջ բերելու դժուարին ու պատասխա-
նատու գործը Թեմական Խորհուրդը մեր տկար անձին վստահեցաւ, զոր Աստուծոյ
ողորմութեամբ գլուխ հանեցինք գոհունակութիւն պատճառելով բոլորին:

Ը.- ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱԱՀՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Այս տարի Թեմական Պատգա-
մաւորական ժողովը տեղի ունեցաւ Լոնկ Այլ Էնտի Ս. Նահատակաց Հայաստանեայց
Եկեղեցւոյ մէջ: Ժողովին մասնակցեցանք Ս. Եկեղեցւոյս Հինգ պատգամաւորնե-
րու հետ: Այս տարուան ժողովը բացառիկ հանգամանք ունեցաւ մէկէ աւելի
պատճառներով: Նախ վերեւ յիշուած մեր կատարած համերաշխական աշխատանքին
շնորհիւ Պատգամաւորական ժողովի մթնոլորտը սիրալիր ու խաղաղ էր: Երկրորդ՝
Թեմիս համար նոր Առաջնորդ ընտրուեցաւ յանձին Հարաւային Ամերիկայի Հայ-
րապետական Պատուիրակ Գերշ. Տ. Սիոն Ս. Արքեպիսկոպոս Սանուկեանի, որ ար-
դէն նիւ նորք ժամանած ըլլալով Ճեռնարկած է իր նույիրական պաշտօնին: Եր-
րորդ՝ Ամերիկահայ Թեմական Պատգամաւորական ժողովներու շուրջ վաթսուն տա-
րուան շըլանին մէջ առաջին անգամ ըլլալով փոփոխութիւն մը մտցուելով դի-
ւանի համար Եկեղեցական ատենապետ մը ընտրուեցաւ յանձին ձեր Հովհեին, ո-
րուն պատիւը կ'երթայ մեր Եկեղեցւոյ:

Այս առթիւ մասնակցեցանք նաեւ Հոգեւորականաց տարեկան համագու-
մարին: ուր նկատի առնուեցան կրօնական բնոյթ ունեցող այլազան հարցեր: Ու-
րախ եւ միսիթարուած կը զգանք տեսնելով որ մեր նորընտիր Առաջնորդ Սրբազանը
իր առաջին գործը ըրաւ նոր համագումար մը եւս կազմակերպելու կ'ուզէ մօտէն

ճանչնալ իր գործակիցները եւ կարգ կանոն հաստատել եւ գործունէութեան մի-
օրինակութիւն յառաջացնել մեր Եկեղեցիներու պայծառացման համար»

Թ.- ՏԱՅԱՐ.- «Տաճար»! Ս. Եկեղեցւոյ փոքրիկ թերթիկն է որ ամ-
սէ ամիս լոյս կը տեսնէ ի բաց առեալ Յուլիս եւ Օգոստոս ամիսներէ։ Բնական
է Երկի եզրւեան այս փոքրիկ Հարտարակութեան մէջ կարելի չէ ամէն բան գրել։
Հազիւ հազ Եկեղեցւոյ լուրերը ամփոփ կերպով կը գետեղուին հոն։ Բայց ու-
րան ենք որ ծխականներու կողմէ կը սիրուի ան։ Մեր փափաքն է ընդլայնել
զայն, սակայն մեծածախ է անոր Հարտարակութիւնը։ Ծխական Խորհուրդի Ելեւ-
մուտքի հաշուեցոյցը մեզի կը յայտնէ թէ որքան մեծ է անոր տպագրական եւ ա-
ռաքման ծախսը եւ որքան քիչ ծխականներ վճարած են անոր չնչին բաժնեգինը ե-
ղող տարեկան մէկ տոլարի գումարը։ Մեր կարծիքով կարելի չէ ներկայ ձեւով
շարունակել զայն եւ ծանրաբեռնել Ծխական Խորհուրդի պիւտճէն։

Ժ.- ՀՈՎՈՒԱՏՈՒՆ.- Գոհունակութեամբ կը յիշատակենք հոս որ ան-
ցեալ տարուան անդամական ժողովի որոշման համաձայն Պատուարժան Ծխական Խոր-
հուրդը Ծխատան երկրորդ յարկը Հովուատան վերածելով գարնան հոդ փոխադրուե-
ցանք եւ աւելի հանգստաւ էտ պայմաններու մէջ կ'ապօինք։ Ասոր փոխարէն երթե-
ւեկի եւ մեր հանգստի բոլոր ժամերը կը տրամադրենք գրասենեակի աշխատանք-
ներուն։

ԺԱ.- ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ.- Տարուան մը մեր հովուական գործու-
նէութիւնը ամփոփ կերպով ներկայացնելէ յետոյ, ի վերջ բանիս։ կ'ուզենք
մեր սրտագին գնահատանքը եւ շնորհակալութիւնը յայտնել բոլոր անոնց, Եկե-
ղեցական մարմին թէ անհատ, որոնք ուղղակի կամ անուղղակի գործակցեցան մե-
զի եւ աջակցեցան մեր գործունէութեան յաջողութեան եւ արդիւնաւորման համար։

Դարձեալ սրտագին շնորհակալութիւն բոլորիդ։

Տէրը օրհնէ բոլորդ։

ԲԱՐԳԻՆ ՔՀՆՅ. ՄԱԳՍՈՒԹԵԱՆ

Հոգեւոր Հովիւ
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊՈՍԹԸՆԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՅ. ԱՌԱՋ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

1958

Գոհունակութեամբ կ'ուզենք տեղեկագրել թէ անցնող տարին եղաւ բարոյապէս եւ նիւթապէս յաջողագոյն տարեշրջան մը, շնորհիւ համայնքիս բարեպաշտպարտածանաչ եւ զոհաբերող ժողովը գումարէն թուսալով եւ վստահօրէն ակնկալելով որ յառաջիկայ 1959 տարին պիտի ըլլայ առաւել եւս բեղմնաւոր տարի մը համայնքիս համար։ Այս տարի գերազանցապէս պատմական տարի մը պիտի ըլլայ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ համար, որովհետեւ ան նոր եկեղեցւոյ հիմնարկութեան պանծալի թուականը պիտի ըլլայ։ Ուստի այս անվերապահ յառաջադրութեամբ գոտեպնդուած, ներկայիւս կու տանք Ծխական նորհութիս միամեայ գործունէութիւնը, ամփոփ տեղեկատուութեամբ եւ զանազան գլխաւոր ստորաբաժանումներով։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ.՝ Ծխական նորհութիս դադարեալ հինգ անդամներու տեղ նորեր ընտրուեցան եւ կամ վերընտրուեցան տարեկան անդամական ժողովին մէջ, որ գումարուեցաւ թունուար 26, կիրակի կէսօրէ ետք ժամը մէկին Շահէ սրահին մէջ օ ծէր օ օր բացման աղօթքէն վերջ Ծխական նորհութիս ատենապետ ջօր։ Սարգիս Զարդարեան ժողովը բացաւ եւ ձեռամբարձ քուէարկութեամբ օրուան դիւանի ատենապետ ընտրուեցաւ Պ. Սարգիս Ստեփանեան եւ ատենապահիր՝ Պ. Արամ Տէր Յակոբեան Ընտրական Յանձնախումբի պատրաստած երկպատիկ ցանկին վրայէն կատարուեցաւ Ծխական նորհութիս մասնակի ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ, որուն մասնակցեցան 153 տրատու անդամներ։ Ընտրութեան արդիւնքը եղաւ ըստ հետեւալին։ ՊՊ. Զարլ Աթալանեան, Արթըր Անսպիկեան, Մայքլ Օհանեան, Հայկ Ժամկոչեան եւ Զարլ Զէյթունճեան։

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԴԻՒԱՆԻ.՝ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Սամբը է Սըրազնի վաւերացումէն ետք Ծխական նորհութիս իր առաջին նիստին մէջ կատարեց էր գիւանական ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ, ըստ հետեւալին։

Զօր. Սարգիս Զարդարեան
Պ. Ճան Սուրսուրեան
Պ. Կարապետ Թաշճեան
Պ. Հայկ Ժամկոչեան
Պ. Խորէն Խոլլիկեան
Պ. Արթըր Անսպիկեան
Պ. Զարլ Սէյթունճեան
Պ. Զարլ Սաւանեան
Պ. Արշի Խոլլիկեան
Պ. Արամ Հինդլեան
Պ. Մայքլ Օհանեան

Ատենապետ
Փոխ-Ատենապետ
Հայերէնի Ատենապահիր
Անգլերէնի Ատենապահիր
Գանձապահ
Հաշուակալ
Խորհրդական

Եկեղեցւոյ գործունէութեանց համընթաց եւ կանոնաւոր յառաջացման համար որդեգրուեցաւ յանձնախմբային դրութիւնը, այս նպատակաւ Տիար Ատենապետը նշանակեց հետեւեալ յանձնախումբերը։
Ա.- Զեռնարկներու Ատենապետ՝ Պ. Խորէն Խոլլիկեան, օգնականներ՝ ՊՊ. Զարլ Սէյթունճեան եւ Արամ Հինդլեան։
Բ.- Նորոգութեան եւ շէնքերու հոգատարութեան։ Ատենապետ՝ Պ. Զարլը Թալանեան, օգնական՝ Պ. Արամ Հինդլեան։
Գ.- Հնդունելութեան։ Ատենապետ՝ Պ. Արշի Խոլլիկեան, օգնական՝ Պ. Արթըր Անսպիկեան։
Դ.- Սրահներու վերատեսուց։ Քարտուղար՝ Պ. Գարեգին Պօղոսեան։
Ե.- Գրենական պիտոյքներու գնման։ Ծխու գիրքերու հոգատար։
Պ. Մայքլ Օհանեան։
Զ.- Ժամուցի պահարաններու հոգատար։ Պ. Գարեգին Պօղոսեան։
Է.- Եկեղեցւոյ գոյքերու հոգատար։ Պ. Կարապետ Թաշճեան։

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԽՍԱՄԱԿԱԼ ՈՒԹԻՒՆ.՝ Կազմուեցաւ նաեւ Կիրակնօր-
եայ Դպրոցի խսամակալութիւն մը հինգ անդամներէ բաղկացեալ ատենապետութեամբ
Պ. Ճան Սուրսուրեանի, օգնականներ՝ Օր. Աստղիկ Արզումանեան, Տիկին Վըրճինիա
Օհանեան, ՊՊ. Ռաֆֆի Հետիցեան եւ Սուրէն Տէնիըլս: Սեր Կիրակնօրեայ Դպրոցը
Օր. Արշալոյս Ճանեանի վերատեսչութեամբ, ներկայիս ունի 95 աշակերտ:

ԴԻՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆ ԷՌԻԹԻՒՆ.՝ Ծխական Խորհուրդս ունեցած է իր երկ-
շաբաթեայ Հերթական ժողովները եւ արձանագրած է 19 նիստեր, նաեւ 3 խառն ժո-
ղովներ եկեղեցւոյս ենթամարմիններու վարչութեանց եւ համայնքիս պատ. երես-
փոխաններու հետ, ինչպէս նաեւ ի պաշտօնէ մասնակցած է եկեղեցաշէն յանձնա-
խումբի ժողովներուն:

Յատկապէս ջանադիր եղած է գործադրել Ազգ. Առաջնորդարանէն բխած
հրահանգները, զեկոյցները եւ թելադրութիւնները:

Տարեշրջանիս մէջ Առաջնորդարանէն ստացած ենք 26 շրջաբերականներ
եկեղեցական զանազան հարցերու շուրջ, որոնց գործադրութիւնը կազմած է Ծխա-
կան Խորհուրդիս գործունէութեան կարեւոր մէկ մասը:

Ծխական Խորհուրդի ժողովներու օրակարգի վրայ այժմէական եւ խիստ
կարեւոր հարցերէն մին եղաւ նաեւ նոր եկեղեցւոյ կառուցման եւ անոր դատավա-
րութեան հարցը:

ԾԽԱԿԱՆ ԿԱՄ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.՝ Առաջին տարեկան անդամական ժո-
ղովը գումարուեցաւ Յունուար 26-ին, ուր կատարուեցաւ Ծխական Խորհուրդի եւ
մէկ երեսփոխանի, ինչպէս նաեւ հաշուեքննիչ յանձնախումբի ընտրութիւն:—
Երկրորդ ծխական ժողովը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 12ին, Երեսփոխանական ժողովի
տարուելիք հարցերու շուրջ խորհրդակցութեան համար:— Երրորդը՝ Դեկտեմբեր
28-ին, նախապատրաստական ժողովը, ուր ընտրուեցաւ Ընտրական Յանձնախումբը՝
յանձինս! ՊՊ. Վահէ Թաշճեանի, Հմայեակ Հապէշեանի, Նշան Սիմոնեանի, Յովհան-
նէս Նահիկեանի եւ Մկրտիչ Խոյլիկեանի: Անձնափոխանորդներ՝ ՊՊ. Փիթը Աղամեան
եւ Սարգիս Հետիցեան:—

ԵՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ.՝ Թեմական Խորհուրդի որոշմամբ պարբերական շրջա-
նային ժողովներ պիտի գումարուին թեմիս ենթակայ այլ եւայլ շրջաններու մէջ,
մասնակցութեամբ հոգեւոր հովիւներու, թեմակալ պատգամաւորներու եւ ծխական
խորհուրդներու անդամոց: Համաձայն այս որոշման, նիւ հնկլ էնտի եօթը եկեղեցի-
ներու շրջանային ժողովը գումարուեցաւ Յուլիս 17-ին, հինգշաբթի երեկոյ, մեր
ծխատան սրահին մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ ատենապետու-
թեամբ Թեմական Խորհուրդի ատենապետ Պ. Երուանդ Աղաճանեանի: Ներկայ էին նաեւ
Թեմական Խորհուրդի փոխատենապետ Արժ. Տ. Բաբեկն ՔՀ. Սագսուտեան եւ անդամ-
ՊՊ. Յարութիւն Թաղոսեան եւ Զարեհ Եկաւեան, ինչպէս նաեւ Առաջնորդարանէն
դիւնադպիր Պ. Սուրէն Մանուէլեան: Եօթը եկեղեցիներէն ներկայ էին շուրջ 40
ներկայացուցիչներ: Ժողովի հարցերէն մին էր Առաջնորդարանի պիւտճէն հաւասա-
րակշուելու հարցը: Այս խիստ կարեւոր հարցի շուրջ եղան գաղափարներու փոխա-
նակութիւն եւ շինիչ թելադրութիւններ:

ԶԵՌԱԿԻՆՆԵՐ.՝ Ա.՝ Սարտ 2, Կիրակի կէսօրէ յետոյ ժամը 2-ին Ճան
Հէնքաք սրահին մէջ շքեղ ճաշկերոյ յթով եւ ճոխ յայտագրով կատարուեցաւ երջան-
կայիշատակ Խրիմեան Հայրեկի վախճանման 50-ը տարեղարօի յիշատակահանդէսը, Հո-
վանակորութեամբ մեր եւ Ս. Թակոր քոյր եկեղեցիներու եւ նախագահութեամբ զոյդ
եկեղեցիներու հոգեւոր հովիւներու: Բ.՝ Յուլիս 13, Կիրակի օր ունեցանք մեր
փառաւոր դաշտահանդէսը եւ աւանդական մատաղօրինութիւնը, որ եղաւ նիւթապէս եւ
բարոյապէս աննախընթաց յաջողութիւն մը:— Գ.՝ Սարտ 27, Հինգշաբթի երեկոյ,
Նահիկ սրահին մէջ ցուցադրուեցաւ՝ Հայերը Ամերիկայի մէջ՝ շատ հետաքրքրա-
կան Ֆիլմը Պ. Աւետիս Տէրունեանի կողմէ: Ժողովուրդին պահանջքին վրայ երկ-
րորդ ցուցադրութիւն մը եւս տեղի ունեցաւ Մայիս 15-ին:— Այս առթիւ կ'արժէ
յիշել թէ Պ. Տէրունեան Հրապարակաւ Տէր Հօր յանձնեց Հայաստանէն բերած քարը
որպէս զի մեր նոր եկեղեցւոյ հիման մէջ դրուի: Այս քարը բերուած է եօթնե-
րորդ դարու հայ ճարտարապետութեան հրաշակերու Զուարենոց հոյակապ տաճարի ա-
ւերակներէն:— Դ.՝ Կիրակի, Հոկտեմբեր 26-ին, եկեղեցւոյ արարողութեան աւար-
տումէն ետք Նահիկ սրահին մէջ կատարուեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ
Ն. Ս. Օծութիւն Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի ծննդեան յիսնամեակի եւ գահակա-
լութեան երրորդ տարեդարձի զոյդ տօնակատարութիւնը շքեղ ճաշկերոյ յթով մը գոր-

ծակցութեամբ եկեղեցասէր Տիկնանց Միութեան։ Այս առթիւ կ'ուզենք յիշել որ թեմական նորհութեամբ որոշած է Ն.Ս. Օծութեան առաջնակարգ ինքնաշարժ մը նուիթել, որուն համար մեր եկեղեցւոյ բաժին ինկած է 600 տոլարի նուիթատուութիւն մը ընել։ Նոյեմբեր 7-8, Ուրբաթ եւ Նաբաթ տեղի ունեցաւ մեր տարեկան պազար եկեղեցւոյ բոլոր օժանդակ մարմիններու մասնակցութեամբ։ Արդիւնքը եղաւ բաշալ երական։ Նաբաթ օր մանաւանդ մեր հաւատաւոր եւ եկեղեցասէր ժողովուրդը խուներամ եկաւ, լայն բացաւ իր սիրտը եւ քսակը։

ՆՈՐԱԿԱԶՄ ՕԺԱՍԴԱԿ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.՝ Այս տարեշրջանին կազմուեցաւ երեք նոր օժանդակ միութիւններ։ Ա.- Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Արանց միութիւն որ ներկայիս ունի շուրջ 90 անդամներ։ Բ.- Եկեղեցասէր Երիտասարդաց Միութեան կրտսերներու Բաժին, որուն կ'անդամակցին 14-18 տարեկան երկսեռ պատանիներ։ Ասոնք պիտի կազմեն մեր եկեղեցւոյ պաֆայ հաւատացեալները։ Գ.- Կազմուեցաւ նաեւ Լին-Սէյլը-Փիպատիի շրջաններու համար եկեղեցասէր Տիկնանց Միութիւն մը 32 անդամունիններով եւ կենսունակ գործունէութեամբ։

ԿՑԱԿՆԵՐ Ի ՆՊԱՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ.՝ Ա.- Հանգուցեալ Տիկին Մէյրի Քէշիշեան կտակած է 500 տոլար։ Բ.- Հանգուցեալ Ստեփան Երէցեան կտակած է 200 տոլար։ Հանգուցեալ Գրիգոր Միութարեան Սառւթ Պոստոնի մէջ ունեցած իր տունները կտակած է Ս. Եկեղեցւոյս։

ՆՈՒԷՐՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ.՝ 1.- Եունիը Սոթոր Մէյլզ ընկերութիւնը Վիճակահանութենէն շահած իր Քէտլ էթ ինքնաշարժը նուիրեց եկեղեցւոյ, որը ծախուեցաւ շահով։ 2.- Տքթ. Սայթ Խօլլիկեան 1000 տոլար նուիրեց Վիճակահանութեան երկրորդ ինքնաշարժը շահած ըլլալուն Համար։ 3.- Սառնարանը՝ որ շահեցաւ Գրոնին-Կարթլէնտ ընկերութիւնը նուիրեց եկեղեցւոյ։ 4.- Հայ-Ֆայ բէտիօնէթը նոյնպէս ծունիը Մոթոր Մէյլզ ընկերութիւնը նուիրեց եկեղեցւոյ։ 5.- Քիչըն էյտ Միքամէսթը նուիրեց Հ.Պ. Զարլս։ 6.- Հանգուցեալ Գէորգ Սթամպունի զաւակները ձեռաց ոսկեզօծ խաչ մը նուիրեցին ի յիշտակ իրենց հօրը։ 7.- Տիկին Մարիամ Տէր Մոսիկեան ձեռաց խաչի երկու գեղեցիկ բոնիչները։ 8.- Պ. Յովհաննէս Սահակեան շուրջառ եւ սարկաւագի շապիկներ նուիրեց։

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿՈՂՄԻՆ ԵՂԱԾ ՆՈՒԻՐԱՏ ՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ.՝ 1.- Ս. էջմիածնայ Լումայ 300 տոլար։ 2.- Սփրինկֆիլտի նորահաստատ Ս. Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցւոյ 100 տոլար։ 3.- Յունաստանի Հայաստանեայց Եկեղեցւոյ 50 տոլար։ 4.- Հէյվերհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ 15-ամեակի առթիւ 25 տոլար։ 5.- Պայպլ Սոսայէթիին 25 տոլար մեր Կիրակնօրեայ Դպրոցին Աստուածաշունչներ եւ կրօնական գիրքեր նուիրած ըլլալուն առիթով։

ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԷՇՋՆՋԼ ՋԱՈՒՆՍՋԼ ԱՌ ԶԵՐՉԸԸՆԻ.՝ Ուրախ ենք յայտնելու որ մեր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին անդամակցած է նէշընը Քառունսը աւ ԶԵՐՉԸԸՆԻ Կրօնական մեծ կազմակերպութեան, եւ մեր հովիւը կը պատկանի կազմակերպութեան Քէյմպընին մասնաճիւղին։

ԺԱՄՈՒԹԻ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ.՝ Մեր Եկեղեցւոյ Եկամուտի մէկ մասը կը կազմէ ժամուցի պահարանները, ուստի անգամ մը եւս կու գանք յիշեցնելու որ մեր պատուական ժողովուրդը բարի ըլլայ ամէն կիրակի ժամուցի պահարանները Վերադարձնել ներփակելով իրենց սրտաբուլս ժամուցը։ Այս տարի 252 պարտաճանաչ ազգայիններ կանոնաւորապէս իրենց պահարանները վերադարձուցին նուէրներով լիւ։

ԱՆԴԱՍԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ.՝ Թեմական Պատգամաւորական ժողովը կարեւորութեամբ նկատի առած է Առաջնորդարանի եւ Թեմիս Եկեղեցիներու նիւթական կացութիւնը, ըստ այնմ տարեկան անդամատուրքի քանակը բարձրացուցած է 10 տոլարի 1959 թունուար 1-էն սկսեալ, որուն 5 տոլարը պիտի փոխանցուի Առաջնորդարան որպէս ծխական տուրք։

ՏԱԺԱՐ.՝ Եկեղեցւոյս Տաճար թերթիկը բոլորեց իր հրատարակութեան երկրորդ տարին։ Ան կը դրկուի Համայնքիս բոլոր ազգայիններու անխտիր՝ որոնց անունը կը գտնուի մեր թղթատարական ցանկին վրայ, անոնք որ չեն ստանար թող բարեհաճին իրենց անունը եւ հասցէն տալ Ծխական նորհուրդին։ Տաճարի հրատարակութեան ծախուց համար կը խնդրուի իբրեւ նուէր տարեկան մէկ տոլար կամ աւել-

լիք Ծխական Խորհուրդը տարեկան մօտաւորապէս 1000 տոլարի ծախս մը ունի թերթիկի Հրատարակութեան եւ Յղթատարի համար, ուստի կը խնդրուի Տաճար ստացող-ներէն որ բարի ըլլան նուէր մը ընել ծախսերը գոցելու համար:

ՇՈՐՀԱԿԱԼԻՔ.- Կը վերջացնենք մեր տեղեկագիրը յայտնելով մեր անխառն գնահատութիւնը համայնքիս արժանընտիր հովիւ Արժ. Տ. Բարգէն ՔՀ. Մագսուտեանի իր արժանաւոր նախագահութեան եւ առաջնորդութեան համար, որ տարուան ընթացքին ամէն կիրակի Ս. Պատարագի մատուցմամբ եւ հոգեշունչ ու հաւատքով լի քարոզութեամբ հոգեւոր արթնութիւն եւ միիթարութիւն տուաւ մեր բարեպաշտ ժողովուրդին:

Կ'ուզենք յայտնել մեր անկեղծ գնահատանքը եւ շնորհակալութիւնը մեր սարկաւագաց եւ դպրաց դասերուն, Բարեշնորհ Աւագ Սարկաւագ լեւոն Թէրգեանի, Կիսասարկաւագունք Պետրոս Առաքելեանի, Յովհաննէս Յարութիւնեանի, Վահէ Թաշճեանի, Գարեգին Պետրոսեանի եւ Սուրէն Մեծօրեանի, որ կը բերեն իրենց սիրայօժար ծառայութիւնը առանց նիւթական վարձարութեան:

Շնորհակալութիւն նաեւ դպրապետ Պ. Տիրան Տինճեանի եւ դպրաց դասու բոլոր անդամ անդամուհիներուն իրենց ներդաշնակ եւ հոգեզմայլ երգեցողութեան համար, ինչպէս նաեւ երգեհոնահար Օր. Արաքսի Թաշճեանի:

Մեր բոլորանուէր շնորհակալութիւնները կ'ուզենք յայտնել եկեղեցւոյ բոլոր մարմիններու Եկեղեցասէր Երէց եւ Կրտսեր Տիկնանց Միութեանց, Նորակազ Արանց Միութեան, Երիտասարդաց Միութեան, որոնք իրենց օժանդակութիւնը բերին եկեղեցւոյս բոլոր ձեռնարկներուն:

Շնորհակալութիւն եւ անխառն գնահատանք ունինք հանդէպ մեր Կիրակ-նօրեայ Դպրոցի ուսուցչական կազմին, տեսչուէի Օր. Արշալոյս Ճանեանի իրենց նուիրեալ ու կորովի գործունէութեան համար:

Պէտք է յիշել եկեղեցւոյս հաւատարիմ աշխատաւորը՝ ժամկոչ Պ. Կարպիսը իր ծառայութեանց համար:

Կ'ուզենք յայտնել մեր անկեղծ գնահատանքը եւ շնորհակալութիւնները եկեղեցւոյս բարեպաշտ, հաւատարիմ եւ զոհաբերուող անդամներուն ու համայնքիս ընդհանուր հայ ժողովուրդին, որոնք իրենց նիւթական եւ բարոյական զոհաբերութեամբ բերին՝ իրենց լաւագոյնը մեր փառաւոր եկեղեցւոյ պայծառութեան եւ բարեզարդութեան համար:

Մասնաւոր շնորհակալութիւն նաեւ բոլոր ներկաներուդ որ եկած էք աւտուածահաճոյ գործերու մասին լսելու եւ բարենպատակ պարտականութիւններ կատարելու:

Ցարգանքներով

Ի գիմաց Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդին

ԿԱՐԱՊԵՏ ԹԱՇԵԱՆ
ԱՄԵՆԱՊԱՀԻՐ

Զօր. ՍԱՐԳԻՍ ԶԱՐԴԱՐԵԱՆ
ԱՄԵՆԱՊԱՀ

1958 ՏԱՐԻՈՅ ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ՊՈՍՏՈՒՄ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Մ Ո Ւ Տ Զ

Նախորդ շըշանէն փոխանցուած - 1 Յունուար 1958 1,299.57

Անդամատուրքերէն	3,285.50
Պնակներէն	8,616.40
Հոգեհանգիստներէն	4,739.50
Սկրտութիւններէն	780.00
Նշանտուք	15.00
Պսակներէն	595.00
Թաղումներէն	1,145.00
Փոխան ծաղկեպսակի նուէրներէն	10,448.14
Սրահներու նուէրներէն	1,310.00
Խեղագին	1,582.70
Եկեղեցապատկան մարմիններէն	200.00
Զեռնարկներէն	5,886.05
Գիրքերու եւ օրացոյցներու վաճառումէն	236.25
Բացառիկ նուէրներէն	43.50
Այլոց համար հանգանակութիւններէն	269.00
Ապահովագրութենէն վերադարձուած	239.24
'Տաճար' թերթիկի բաժանորդներէն	114.00
Եկեղեցապատկան մարմիններէն դրոշմաթուղթի	187.50
Թէքսէն վերադարձուած	67.27
Աղքատաց գանձանակէն	27.05
Զանազան եկամուտ	186.75
	40,058.15
Դրամատունէն հանուած դրամ	4,738.25
	46,095.97

Հաշուեքննիչ Յանձնախումբս ի վերոյ ներկայացուած ելեւմտից
Հաշուեցուցակը քննելով եւ տոմարներուն մէջ ցոյց տրուած գումարներուն
համաձայն գտնելով ճշգութիւնը կը վաւերացնէ:

ՄԻՋՐԱՆ ԿՕՇԿԱՐԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԵՏԻՑԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՀԵՍԻ ԳՈՒՄԱՐԸ

Պատրաստ գումար դրամատուներու մէջ 12-31-57	15,501.11
ինքնաշարժներու վիճակահանութեան տոմսերէն 27,188.00	
Դրամատան տոկոսը	860.11
Զէքինկ էքառնթին փոխադրուած	500.00
	28,548.11
Գումար	44,049.22
Վիճակահանութեան առարկաներու ծախսեր	10,808.23
Զէքինկ էքառնթին փոխադրուած	1,743.50
	12,551.73
Դրամատուներու մէջ պատրաստ գրամ - 12-31-58	31,497.49

1958 ՏԱՐԻՈՑ ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ՊՈՍՏՈՆԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ծ. Լ. Բ.

Տ. Բաբեկն ՔՀՆ. Մագսուտեանի թոշակ	4,279.75
Դպրապետի	1,200.00
Սրկընի սթի	440.00
Ժամկոչի թոշակ	2,910.60
Առաջնորդարանի տուրք	1,440.00
Եկեղեցականաց Հիմադրամի ֆընտին	408.00
Շէնքերու նորոգութեան	565.28
Տաքութեան համար իւղի	2,543.27
Կէզ, Ելեկտրականութիւն եւ մոմ	1,275.75
Գիրքերու եւ օրացոյցներու	374.53
Ապահովագրութեան	1,271.57
Հեռախօսի եւ նամակադրոշմներու	1,446.59
Ծանուցումներու եւ տպագրութեան	2,176.90
Փոխան ծաղկնապակի այլոց բաժինները	2,791.18
Գործաւորի տուրք	146.26
Զեռնարկներու առթիւ եղած ծախսեր	2,952.90
Ճանապարհածախս	1,520.94
Հովուատան շինուաթեան	6,186.58
Նոր ինքնաշարժի համար վճարուած	1,995.00
Հաշտահանդէսի նուէքրներու ծախս	1,271.86
Քարտուղարի թոշակ	1,110.00
Առաջնորդարանի անդամատուրք	772.00
Հովիւի տան վարձք	300.00
Էջմիածնի լումայ	300.00
Երուսաղէմի համար հեռագիրներու ծախս	1,591.33
Զանազան նուէքրներու	300.00
Ինքնաշարժի ապահովագրութեան	148.20
Կիրակնօրեայ հպրոցի ծախսեր	196.78
Խրիմեան Հայրիկ - գիրքերու	175.00
Հիւրաբար այցելող եկեղեցականներու ծախս	34.50
Զանազան ծախսեր	2,156.81
Ընդհանուր գումար ծախսերու	44,281.58
Պահեստի դրամ	500.00
Պատրաստ դրամ - 31 Դեկտեմբեր 1958	1,314.39
Ընդհանուր Գումար	46,095.97

1958 ՏԱՐԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊՈՍՏՈՒՄ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵԿԵՂԵՑԱՍԿՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

1958 տարեցը ջանի ընտրութեան ժողովէն յետոյ առաջին պատեհութեամբ գումարուեցաւ վարչական ժողով, նախագահութեամբ Արժ. Տ. Բաբեգէն Ք. Մագսութեանի եւ դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով։-

Փայլուն Մազմանեան
Զգաստուհի Սարկաւագեան
Աղաւնի Աշճեան
Վարդուհի Պապիկեան
Հոփիսիմէ Կօշկարեան
Փայլուն Խօլլիկեան
Նուարդ Դանիէլեան
Արաքսի Յ. Խօլլիկեան
Վերժին Հաթապեան
Անոյշ Քէնտէրեան
Հոփիսիմէ Արոյեան

Ատենապետուհի
Փոխ-Ատենապետուհի
Ատենադպրուհի
Փոխ-Ատենադպրուհի
Գանձապահ
Հաշուակալ
Թղթակից
Անգլերէնի քարտուղար
Խորհրդական

Նորակազմ Վարչութիւնը անմիջապէս գործի սկսաւ եւ հետեւեալ յանձնախումբերը կազմեց որպէս զի գործեն իր կողքին։-

1.- Քննիչ Յանձնախումբ.՝ Երանուհի Դանիէլեան, Խանըմ Տէմիր-ճեան եւ Աղաւնի Հետիցեան։

2.- Դաստիարակչական Յանձնախումբ.՝ Երէցկին Ազատուհի Մագսութեան եւ Սոնա Օտեան։

3.- Խոհանոցի Յանձնախումբ.՝ Հսկիչ՝ Վերժին Հաթապեան, Գործակիցներ՝ Զարուհի Թիթիճեան, Մէյրի Տէրտէրեան, Սինա Թաշճեան եւ Հոփիսիմէ Արոյեան։

4.- Այցելու Յանձնախումբեր.՝ Խորաքանչիւր քաղաքի մէջ առանձին առանձին։

Ուրախ եմ յայտնելու որ մեր անդամուհիները, ըլլան յանձնախումբերու մէջ կամ անկէ դուրս, երբ իրենց պէտքը զգացած ենք անոնք յօժարակամբերած են իրենց օգտակար ծառայութիւնը։

Յաջորդաբար ամէն ամիս ունեցած ենք մեր վարչական եւ անդամական ժողովները, ուր Տէր Հայրը, Երէցկինը եւ Տիկին Սոնա Օտեան խօսած են օգտակար նիւթերու շուրջ։

Ինչպէս ամէն տարի, այս տարի ալ բերած ենք մեր ծառայութիւնը Ծխական Խորհուրդին ձեռնարկած պազարին եւ դաշտահանդէսին, ինչպէս նաև Երիտասարդաց կազմակերպութեան դաշտահանդէսին։

Տարուան ընթացքին ունեցած ենք հետեւեալ ձեռնարկներ։-

1.- Պահոց ճաշ, Ս. Սարգսի տօնին առթիւ։

2.- Վարդանանց տօնին առթիւ մատուցուած է Ս. Պատարագ եւ Միութեանս անդամուհիները Հաւաքաբար Հաղորդուած են։ Նոյն օրը կէսօրին ունեցած ենք Հացկերոյթ եւ ապա գեղարուեստական յայտագիր։ Որպէս հիւր ունեցած ենք Ունթը թառունի եւ Լօրէնսի հովիւները։

3.- Զափկուան առթիւ բաժնած ենք զարդակոճակներ։

4.- Մայիս ամսուն ունեցած ենք փէնի սէյլի ճաշկերոյթ։

5.- Ումէն սէյլ, քանի մը անգամներ։

6.- Հոկտեմբերին՝ տարեկան ճաշկերոյթ եւ Հոգեհանգստեան Պաշտօն մեզմէ բաժնուած անդամուհիներու յիշատակին։

Այս ճաշկերոյթը զուգաղիպեցաւ Վեհափառ Հայրապետի ծննդեան յիս-
ներորդ եւ գահակալութեան երրորդ տարեդարձներուն եւ այդ պատճառաւ զայն
սարքեցինք Ծխական Խորհուրդներուն հետ միասին փառաւոր կերպով։

Այս տարի անդամու հիներուն փոքրիկ գուլպաներ ղրկուեցան Ծնուն-
դի առիթով որպէս զի իրենց նուէրներով լեցնեն զանոնք եւ վարչութեան վե-
րադարձնեն։

Եօթը եկեղեցիներու վարչութիւններս միասնաբար դաշտահանդէս մը
կազմակերպեցինք եւ արդիւնքը - 1482 տոլար - ղրկեցինք Ս. էջմիածին։

Մեր այս տարուան գործունէութեան զուտ շահը եղած է 2,871.38
տոլար։

Տարուան սկիզբը պանքայի մէջ ունինք	8,073.11
Տարուան ընթացքին ստացուած տոկոսը	260.72
Այս տարուան ընդհանուր մուտքը	2,871.38
Ներկայիս պանքայի մէջ ունինք	11,205.21

Այս տարի այցելութիւն տուինք Ծերանոցին եւ Հնդկահաւի ճաշ տը-
ւինք ծերերուն։ Մեր Երեցկինը պատրաստած էր Ծնունդի գեղեցիկ փէճէնդ մը
եւ Տէր Հայրը խօսեցաւ ծերերուն հոգեկան փրկութեան մասին։ Բոլորը ուրա-
խացան եւ շատ գոհ մնացին։

Ծնորհակալութեան պարտք մը ունինք մեր ժողովուրդին որ միշտ
բարեացակամ գտնուած է մեզի հանդէպ եւ քաջալերած է մեր կազմակերպած ձեռ-
նարկները։

Ծնորհակալութեան բաժին մըն ալ մեր անդամու հիներու որոնք վար-
չութեան կողքին բերին իրենց անձնուէր ծառայութիւնը։ Առանց անվերա-
պահ աջակցութեան թերի պիտի ըլլար մեր յաջողութիւնը։ Կատարեալ յաջողու-
թեան գաղտնիքը կը կայանայ համերաշխ գործակցութեան մէջ, եւ մեր անդամու-
հիները լաւ հասկցած են զայն։

Կրկին Հնորհակալութիւններ։

ՓԱՅԼՈՒՆ ՄԱԶՄԱՆ ԵԱՆ
Ատենապետու հի
Եկեղեցասէր Տիկնանց Միութեան

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԶԵԼՍԻԻ ԵԿԵՂԵՑԱՍԽՐ ՏԻԿՍԱՆՑ ՄԻՈՒԹԵՑԱՆ

ԶԵԼՍԻԻ ԵԿԵՂԵՑԱՍԽՐ ՏԻԿՍԱՆՑ ՄԻՈՒԹԵՑԱՆ ՀԻՄՆՈւած է 1929-ին եւ երկար տարիներու ընթացքին ծառայած է Պոսթոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ, որուն մէկ անբաժան մասնիկն է, տեղւոյն հայութեան եւ մատաղ սերունդի հայեցի դաստիարակութեան։

Միութեանս 1958-ի վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ կերպով։-

Վերժին Խըզարճեան	Ատենապետու հի
Վարդու հի Յարութիւնեան	Փոխ-Ատենապետու հի
Անսա Քինոսեան	Ատենադպրու հի
Գոհար Ալեանաքեան	Գանձապահ
Վարդեր Գրիգորեան	Խորհրդական
Պայծառ Թաղոսեան	
Ազնիւ Մատթէոսեան	

Կանոնաւոր կերպով կ'ունենանք մեր ամսօրեայ ճաշաժողովները ժողովները կը գումարուի ին անդամուն հիներու տուները եւ ճաշերը կը պատրաստուին հիներընկալ անդամուն հիի կողմէ, բայց ճաշերուն եկամուտը կը մտնէ Միութեան գանձը։

Անցնող տարեշրջանին ունեցանք բաց ի ամսօրեայ ժողովներէ մեծ պահոց մէջ հացկերոյթ մը։

